ՀԵՂԻՆԷ

ՎԷՊ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Նարուներակութիւն [1])

VIII

Հեղինէի հիւանդութեան հետևեալ օրերն էլ Սահառունին նոյն տաժանելի դրութեան մէջն էր. բան ու գործից բոլորովին աւարա էր դարձել. օրը մի քանի անգամ գնում՝ էր Ամիրանովենց տունը կամ Ասունու մօտ. մի խօսքով նորա սիրտն ու միտքը զբաղուած էր միայն մի բանով—սպասում էր Հեղինէի հիւանդութեան ճգնաժամին, որի վրայ էին հիմնուած նորա բոլոր յոյսերը և որի այս կամ այն ելքից կախուած էր նորա երջանկութիւնը կամ թշուառութիւնը։

Այդ օրերը Սահառունին մի անգամ նստած Ամիրանովի առանձնասենեակում Ասունու հետ խօսում էր Հեղինէի մասին։

—Գէորգ, երէկ Հեղինէն ինձ կանչեց իւր մօտ, խնդրում աղաչում էր որ դու բոպէով գոնէ գնաս մօտը. ինչ որ կարևոր բան ունի քեզ ասելու։

---

[1]) Տե՛ս «Մուրճ»- 1891 № 2։

Այդ բոպէին մէկը կամաց թխթխկացրեց դուռը։

Թամարն էր, դուռը բաց արեց ու ներս մտաւ առանձնասենեակը։

—Գէօրգի Ալեքսանդրովիչ, գնացէք Հեղինէի մօտ, ուզում է ձեզ տեսնել։

Սահառունին սիրտ չէր անում գնալ, վախենում էր թէ հիւանդին կ'անհանգստացնի. բայց Թամարը համոզեց ասելով որ հարսը երեք օր կը լինի ինչ խնդրում է նորան կանչել, ուզում է տեսնել նորան ու մի ինչ որ կարևոր բան ասել մարդուն հաղորդելու համար։

—Գնա. շատ է խնդրում, չի կարելի նորա կամքին հակառակել, իւր կողմից աւելցրեց Ասունին։

Սահառունին էլ չը կարողացաւ հակառակել ու հեռացաւ Թամարին։ Հեղինէն սիրով և քնքշութեամբ նայեց նորան և ակնարկեց տալերին որ հեռանան սենեակից ու նրանց մենակ թողնեն։ Յետոյ առանց խօսելու ձեռքով նշան արեց Սահառունուն, որ նստի մահճակալի կողքին դրած աթոռի վրայ ու թոյլ ձայնով արտասանեց.

—Քիչ էր մնում մեռնէի առանց ձեզ վերջին հրաժեշտ տալու... այժմ ոչինչ, աւելի լաւ եմ զգում ինձ, բայց ով գիտէ... վաղը ինչ է գալու իմ գլխին։

—Սիրելի տիկին Հեղինէ, հանգիստ եղէք, մի վրդովուէք, ձեզ ոչինչ չի պատահիլ, շուտով կը լաւանաք, չափազանց գորովանքով արտասանեց Սահառունին նայելով նորա սիրուն դէմքին, որ այդպիսի կարճ ժամանակում սաստիկ փոփոխութիւն էր կրել հիւանդութիւնից։

Մի քանի բոպէ նրանք լուռ նստած էին։

Սահառունու սրտում յոյս ծագեց, որ Հեղինէն շուտով կը լաւանայ. նա այնպիսի հայեացք գցեց Հեղինէի վրայ, կարծես ուզում էր ասել՝ դու իմս ես ընդ միշտ, մահը քեզ չի խլիլ ինձանից։

Հիւանդը մի քիչ ոյժի եկաւ ու նորից խօսեց.

—Գուցէ այլ ևս չը տեսնուենք... օգտուելով մեր բարեկամութիւնից... ես ձեզ կանչեցի, սիրելի Գէօրգի Ալեքսանդրովիչ, որպէս զի յայտնեմ ձեզ մի խնդիրք, որով միայն ձեզ կարող էի դիմել... եթէ ես մեռնեմ, խնամք տարէք իմ երեխայիս, դաստիարակեցէք նրան այնպէս ինչպէս դուք էք դաստիարակուել, այդ է իմ միակ բաղձանքս։

Դժուար է խօսքով որոշել թէ ի՞նչ էր զգում Սահաուունին այդ լսելիս։ Կսկծահար սրտով նա ջերմ համբոյրներ էր դրոշմում Հեղինէի ձեռքերին՝ աշխատելով հանգստացնել նրան, թէև ինքը այնքան յուզուած էր, որ հազիւ էր կարողանում պահել արտասուքը։

Հեղինէն մի քանի անգամ փորձ արեց խօսելու, բայց լռեց. երևում էր, որ մի բան ունէր ասելու, բայց սիրտ չէր անում որ ասի։ Վերջապէս նա յաղթեց իրան, նայեց մտերմաբար Սահաուունուն ու յուզուած, դողդոջուն ձայնով ասաց.

—Դիտեմ, կ՚ասէք՝ հայր ունի, բայց... թող գաղտնիքս ինձ հետ գերեզման չը մտնի... ես չեմ ուզում որ նա... հօրը նման լինի։ Մի ժամանակ...

Հիւանդը էլ չը կարողացաւ շարունակել. նորա մաշուած երեսի վրայ երևեց սաստիկ տանջանքի արտայայտութիւն և արտասուքի մի քանի խոշոր կաթիլներ իրար ետևից գլորուեցին նորա գունատ այտերի վրայ։

—Տիկին Հեղինէ, ինչու էք նեղացնում ձեր սիրտը զուր կասկածներով. քանի որ բժիշկները հաստատ ասում են որ ձեզ ոչ մի վտանգ չի կարող պատահել։ Աստուած ձեզ որդի պարգևեց, նա ձեզ դժ էլ կը տայ դաստիարակելու Նրան. ոչ ոք չի կարող այնպէս դաստիարակել Նրան ինչպէս դուք։ Հանգստացէք, խնդրեմ, սիրելի բարեկամ։

—Շատ ուրախ եմ, որ ձեզ տեսայ... այժմ կարող եմ հանգիստ սրտով մեռնել, հազիւ լսելի ձայնով արտասանեց Հեղինէն ու նեղեց։

Սահաուունին սաստիկ վախեցաւ ու սկսեց դողդոջուն ձեռքով քացախ քսել Հեղինէի ճակատին ու երեսին։

Մի հինգ րոպէ անցած հիւանդը սկսեց ուշքի գալ։ Նա աչքերը բարձրացրեց դէպի Սահաուունին, երախտագէտ հայեացքով նայեց Նրան ու թուլացած ձեռքով սեղմեց Նորա ձեռքը։

—Ո՛րքան ուրախ եմ, որ դուք այստեղ էք. այժմ աւելի լաւ եմ։

—Մի խօսէք, Աստուծու սիրուն, տիկին Հեղինէ, թէ չէ էլի կը թուլանաք, աղաչելով յորդորում էր Նրան Սահաուունին որի գոյնը գցել, սպրտնել էր։

—Լաւ, չեմ խօսիլ, ինձ համար զարմանութիւն է ձեզ հնազանդելը։

Երկուսն էլ լուռ իրար էին նայում։

Ցանկարծ դուռը ճռռաց և իսկոյն Սահառունու ականջին դիպաւ Եփեմիայի ճրզզան ձայնը։

—Դուրս դնացէք, Գէօրգի Ալեքսանդրովիչ, բժիշկներն եկան... լաւ չի լինի, որ նրանք ձեզ այստեղ տեսնեն։

Նա մի թշնամական հայեացք գցեց Սահառունու վրայ ու մօտեցաւ Հիւանդին։

—Սահառունին, ննջարանից դուրս գալիս, դուռն մօտ յանկարծ պատահեց Ամիրանովին, որ հէնց այդ րոպէին էր եկել։ Ամիրանովը զարմացած նայեց ընկերոջ վրայ ու վազեց դէպի կնոջ մահճակալը։

Ամիրանովի վերադարձից յետոյ Սահառունին ոսոր չը կարեց նրանց տանից. էլի շուտ-շուտ գնում էր այցելութեան. բայց երբ որ նկատեց, որ Ամիրանովը օրէցօր աւելի սառն է ընդունում իրան, աւելի լաւ համարեց վերջ տալ իւր այցելութիւններին։ Ճիշտ է՝ նրա համար շատ դժուար էր այդ, բայց Հեղինէի հանգստութիւնը ամէն բանից վեր դասելով՝ նա աւելի լաւ համարեց զրկուել Հեղինէին տեսնելու զարմանութիւնից, քան իւր այցելութիւններով տեղիք տալ Ամիրանովին կասկածանքով վերաբերուել կնոջը։

Երեք օրից յետոյ՝ բժիշկների ասելովը՝ պէտք է լիներ հիւանդութեան ճգնաժամը։ Այդ երեք օրը մինչև մթնացրեց Սահառունին՝ հոգին դուրս եկաւ.—վերջապէս չորրորդ օրը, երբ որ պէտք է որոշուէր նորա սիրելի Հեղինէի ճակատագիրը, նա առաւօտը գիշերհանաց դուրս եկաւ տանից ու սկսեց թափառել Ամիրանովենց տան շրջակայքում։

—Աննա Արտեմիւնա, համարեա վազելով մօտեցաւ նա օրիորդ Գուրգենեանին, ասէք, ի սէր Աստծու, ինչպէս է տիկին Հեղինէն. դուք երևի նրանց տանից էք գալիս։

Այդ ասելիս Սահառունին այնպէս պինդ սեղմեց օրիորդի ձեռքը և այնպէս տարօրինակ կերպով էր նայում նրան, որ նա շփոթուեց ու մի քանի րոպէ չը կարողացաւ ոչինչ պատասխանել։

—Ես ամեն օր լինում եմ նրանց տանը, բայց բժիշկները ոչ ոքի չեն թողնում հիւանդի մօտ գնալ։ Ախ, խեղճը շատ վատ է,

սաստիկ տխրութեամբ արտասանեց Աննան ու, նայելով Սահառունուն, վախիցը յետ-յետ քաշուեց։

Ինչ է եղել ձեզ, Գէօրգի Ալեքսանդրովիչ, ինչո՞ւ էք այսպէս գունաթափուել։

—Ոչինչ, իմ մասին չարժի խօսել, անհամբերութեամբ թափ տուեց ձեռքը Սահառունին։

Այդ րոպէին յանկարծ նրա աչքն ընկաւ Ամիրանովենց տանից դուրս եկող բժիշկների երեսին,—նրանք ժպտում էին...

Սահառունին ամէն բան մոռացաւ. թուաւ դէպի Ամիրանովենց տունը ու մտաւ ներս։ Սրահում նա պատահեց Ասունուն և, երբ որ նրա դէմքի վրայ կարդաց «փրկուած է», էլ իրան բոլորովին կորցրեց ուրախութիւնից գրկեց ընկերոջը ու սկսեց համբուրել։

Այդ բոլորը մի ակնթարթում կատարուեց։ Գուրգէնեանը մենակ մնալով փողոցում՝ սկզբում ապշած կանգնած էր ու չէր կարողանում հասկանալ թէ ինչու Սահառունին խօսակցութիւնը կիսատ թողեց ու գժի նման վազեց դէպի Ամիրանովենց տունը։ Նա միայն այն ժամանակը գլխի ընկաւ թէ բանը ինչումն է, երբ որ ծանօթ բժիշկներից մէկը մօտեցաւ նրան և յայտնեց որ ճգնաժամը լաւ անցաւ, այնպէս որ Հեղինէն կը լաւանայ։ Սրիորդը սաստիկ ուրախացաւ լսելով այդ լուրը և էլ չը սպասելով Սահառունուն՝ շարունակեց ճանապարհը։

—Հը՛մ, խորհրդաւոր և մասամբ խորամանկ կերպով արտասանեց նա, այժմ հասկացայ։ Ի՞նչպէս մի ակնթարթում ամենասարսափելի յուսահատութիւնը փոխուեց ծայրայեղ ուրախութեան։

Ճիշտն ասած՝ այդ ինձ գուր է գալիս ժպտալով շարունակեց օրիորդը։ Սահառունու մէջ կեանք կայ. նրա դէմքը միշտ արտայայտում է այն, ինչ որ նրա սրտումն է։ Իսկ Թոմաևը բոլորովին ուրիշ տեսակ մարդ է. նա այն աստիճան անթափանցելի դէմք ունի, այն աստիճան անտարբեր ու հանգիստ կերպարանք ունի, որ նրա ամենամտերիմ բարեկամներն անգամ չեն կարող հաստատ ասել՝ արդեօք ուրախ է նա թէ տխուր, մինչդեռ նա գիտէ, որ այդ ինձ շատ է հետաքրքրում։ Այ, հէնց թէկուզ վերջին անգամը, երբ որ եկել էր ինձ բարև անելու,—գոնէ ակնարկութեամբ էլ է չը հասկացրեց ինձ, որ նրան ցաւ է պատճառում ինձնից անջատուելը, իսկ ես

հաստատ գիտեմ... երբեմն մինչև անգամ մարդու ջիգր է դալիս նրան նայելիս, կարծես ապրելն էլ նրան ծանրութիւն է տալիս։ Ախ, եթէ այդ խելքի, այդ կրթութեան, ու ծահողութեան ու ազնուութեան հետ Դաւիթը աւելի եռանդ ունենար, այդքան ֆլեգմատիկ չը լինէր և աւելի աշխուժով ու գեղեցիկ լինէր, այն ժամանակ նրա հասը չէր լինիլ ամբողջ աշխարհում։ Բայց արդեօք այն ժամանակ ես նրան աւելի կը սիրէի՝ քան այժմ։

Այդ հարցը երկմտութիւն արտայայտող ժպիտ բերեց Աննայի երեսին։

Մինչդեռ օրիորդը պաշարուած այդպիսի մտածմունքներով առաջ էր գնում, Սահառունին վերադառնում էր տուն։ Նա իրան այնպէս էր զգում, կարծես կրծքի վրայից մի ահագին սար գլորուել վայր էր ընկել։ Սենեակը մտնելով Սահառունին տեսաւ սեղանի վրայ մի նամակ,—Վլադիկաւկազից էր. քոյրը գրում էր որ մարդու մահից յետոյ շատ նեղ դրութեան մէջ է, մարդու թողած անորոշ կտակի պատճառով գործերը այնպէս խառնուել են, որ ինքը չի կարող կարգի բերել առանց եղբօր օգնութեան և այդ պատճառով խնդրում էր, որ նա գնայ Վլադիկաւկազ ու յետոյ Պեատիգորսկ, ապացուցանելով որ այդ անհրաժեշտ է։

Սահառունին առանց տատանուելու վճռեց գնալ քրոջ մօտ։ Նրան միայն մի բան էր պահում—Հեղինէի տկարութիւնը։ Նա սպասեց մինչև որ Հեղինէն բոլորովին լաւացաւ։ Այդ մի շաբաթ քաշեց։

Ճանապարհ ընկնելու նախընթաց օրը Սահառունին ուզում էր գնալ մնաս բարև անել Հեղինէին. նա մի քանի անգամ վճռում էր գնալ նորա մօտ, բայց ամեն անգամ կարծես մի ներքին ձայն նրան ասում էր, որ նա պէտք է յաղթէ իրան ու հեռանայ առանց տեսնելու Հեղինէի հետ։

Ճիշտ է՝ այդ երկուսիս համար էլ լաւ կը լինի, վճռեց նա նրանց տան դռան առաջ՝ երբ որ վերջին անգամ կանգնած տատանւում էր՝ չիմանալով ուր գնայ—յետ՝ դէպի տուն թէ առաջ՝ դէպի Ամիրանովենց տան սանդուխքները, և սաստիկ յուզուած անհաստատ քայլերով վերադարձաւ տուն։ Նա այնքան թուլացել էր վշտից ու յուզմունքից, որ հազիւ կարողացաւ բարձրանալ սանդուխքներով ու իրան գցել իւր սենեակը։

Հեղինէն որ լսեց թէ Սահառունին հեռացել է Թ-սից, շատ էր մոռածում, բայց չէր կարողանում հասկանալ թէ ինչպէս է Սահառունին վճռել հեռանալ առանց իրան հետ մնաս բարև անելու։ Այդ հանգամանքը աւելի էր սաստկացնում նորա մոռատանջութիւնը, որի պատճառը շատ բնական էր։ Քանի նորա առողջութիւնը կազդուրւում էր, այնքան աւելի յաճախ էր նա դրաղում իւր դրութիւնով, աշխատելով մի ելք գտնել այդ անտանելի վիճակից։ Երբ որ առաջին անգամը նորա գլխում ծագեց մարդուց բաժանելու միտքը, նա սարսափեց այդ յանդուգն մտադրութիւնից. նա գիտէր որ բոլոր ազգականներն ու ծանօթները անէծք ու նախատինք կը թափեն նորա գլխին. նա գիտէր, որ ոչ ոք չի ցանկանալ իմանալ բաժանելու իսկական պատճառները, ոչ ոք չի մեղադրի մարդուն, բոլորը իրան կը մեղադրեն։ Բայց մարդկանց կարծիքից Հեղինէն այնքան չէր սարսափում որքան մեղքից։

Բաժանել մարդուց կը նշանակէր քանդել ամուսնութեան սուրբ կապը, որ նա Աստծու տաճարում երդուել էր յաւիտեան պահպանել. պսակը նրա աչքում մի վսեմ և բարոյական խորհուրդ էր, որը լուծելը նրան յանցանք էր թւում։ Սակայն օրէցօր նրա առելութիւնը դէպի իւր մարդը սաստկանում էր և վերջապէս հասաւ այն աստիճանի, որ էլ անհնար էր միասին ապրել։ Տառանջում էր, վախենում էր Հեղինէն, բայց մինչև մահը առելի մարդու հետ ապրելը նրան անտանելի էր թւում և նա հաստատ վճռեց էլ այդպէս չը շարունակել։ Պէտք է մի ելք գտնել։

—Երեխայիս կը վերցնեմ ու կը դնամ մի փոքրիկ քաղաք ուր ոչ ոք ինձ չի ճանաչիլ. մի աշխատանք կը գտնեմ ինձ համար ու հանգիստ սրտով կապրեմ, մտածում էր ինքն իրան Հեղինէն։

—Բայց մարդս կը թողնի՞ որ այդպէս անեմ, աւելի լաւ չի լինիլ որ այդ նրանից ծածկեմ, յանկարծ թողնեմ ու հեռանամ։ Չէ... այդ նրան կը զայրացնի, նա կընկնի յետևիցս, կը գտնի, երեխայիս կը խլի ձեռքիցս ու գուցէ ընդ միշտ բաժանի ինձ իմ սիրելի երեխայից։

Այդ միտքը այն աստիճան սարսափեցրեց Հեղինէին, որ նա օձի կծածի պէս բացականչեց.

—Ոչ, ոչ, այդպէս չեմ անիլ... փորձեմ տեսնեմ, գուցէ կա-

բելի լինի Նորա հետ անկեղծ խոսել, հասկացնել, որ մենք էլ իրար հետ ապրել չենք կարող, ոչ ոչ համաձայնի...

Թէև՝ իսկապէս ասած՝ Հեղինէն շատ էլ յոյս չունէր, որ մարդուն կարող է համոզել, բայց պահանջ էր զգում անկեղծօրէն խոսել Նորա հետ բաժանուելուց առաջ։

Մի օր, երբ Հեղինէն սաստիկ զբաղուած էր այդ մտածմունքներով, յանկարծ զգաց որ մէկը ձեռքով շոշափում է իւր երեսը. նա ցնցուեց։

—Ինչու վախեցար, հոգիս, ինչու ես այսօր այդպէս գոյնդ գցել։

—Ի՞նչ, բացականչեց նա թափ տալով մազերը։

—Նկայ քեզ ասելու, որ շուտով մենք պէտք է հեռանանք Թ-սից։

—Ո՞ւր և ինչո՞ւ, հարցրեց Հեղինէն կարծես սթափուելով խոր քնից։

—Բժիշկները թէև քեզ բոլորովին առողջ են համարում, բայց ասում են որ բոլորովին բժշկուելու համար քեզ անհրաժեշտ է դնալ ջրերը։

—Ի՞նչ ջրեր, Պեատիգո՞րսկ։

—Լաւ գուար։ Վերջապէս կը տեսնես Կովկաս սարերը, Վլադիկավկազի գեղեցիկ ճանապարհը։

Հեղինէն մտքի հետ ընկաւ։

—Դուք էլ էք գալու ինձ հետ։

—Ի հարկէ։ Բայց այդ ինչ դուք է մեր մէջ։ Ինչպէս տեսնում եմ, Հեղինէ, դու դեռ չես մոռացել, նեղացած ես ինձանից։

Ամիրանովը ուզում էր գրկել կնոջը, բայց նա խիստ կերպով մերժեց Նորա գգուանքը։

—Ասա, Աստծու սիրուն, ինչ է պատահել քեզ, կամ թէ ես այլ ևս քո ամենամտերիմ բարեկամը չե՞մ համարուում։

Ամուսիններին մէջ տիրեց երկարատև լռութիւն. վերջապէս Հեղինէն՝ դժուարութեամբ շունչ քաշելով՝ սկսեց խոսել.

—Մի ժամանակ ես ամէն հնարք գործ էի դնում, որ մենք ամենամտերիմ բարեկամ լինենք, բայց երևի չիշում ես որ դու միշտ մերժում էիր իմ բարեկամութիւնը։

—Ասա խնդրեմ, ինչ ես հասկանում դու բարեկամութիւն և սէր ասելիս։

—Շատ տարօրինակ հարց է, ա՛յն ինչ որ ամենքը։

—Միթէ, Հեղինէ, դու իսկապէս չես ուզում որ ես քեզ հետ գամ։

Կինը գլխով դրական նշան արեց։

— Ախ, հառաչանք արձակեց նա կուրծքը բռնելով, եթէ հնար լինէր...

Հեղինէի ձայնը սաստիկ յուզմունքից կորուեց։

—Այո, մի քիչ յետոյ շարունակեց նա կմկմալով, ես կուզէի... ընդ միշտ... բաժանուել ձեզնից։

Ամիրանովը ապշած և լուռ նայում էր կնոջ վերայ։ Նա իւր ականջներին չէր հաւատում և չէր իմանում թէ ինչ պատասխանի կնոջ ասածին։

Այն տոնը որով Հեղինէն արտասանեց այդ խօսքերը և այն հայեացքը, որով նա նայում էր մարդուն, պարզ ցոյց էին տալիս, որ նա կատակ չի անում, այլ լուրջ պահանջ է յայտնում։

Մի քանի րոպէից յետոյ վերջապէս Ամիրանովը ապշութիւնից սթափուեց և սկսեց մտածել թէ ինչ ասի կնոջը։

—Հեղինէ, հոգիս, կարելի էր միթէ սպասել որ դու այդքան անսիրտ կը լինես դէպի ինձ։ Զէ, անկարելի է, դու չէիր կարող այդ ասել, դու կատակ էիր անում։ Այնպէս չէ՞։ Ասա որ կատակ էիր անում։

Կինը բացասական կերպով թափ տուեց գլուխը։ Այդ րոպէին նորա դէմքը արտայայտում էր արհամարհանք դէպի Ամիրանովը։

—Բայց միթէ դու հաստատ ուզում ես բաժանուել ինձանից, դողդոջուն ձայնով շարունակեց Ամիրանովը։ Կարող ես արդեօք մեղադրել ինձ որ ես գոնէ մի անգամ դաւաճանած լինեմ քեզ։ Այն օրից որ պսակուել եմ՝ մինչև անգամ աչք չեմ ունեցել նայելու ուրիշ կնոջ վրայ. իսկ՝ ինչ ես կարծում՝ շա՞տ կը դոնես այդպիսի հաւատարմութիւն. ահա թէ ինչպէս ես վարձատրում։

—Հը՛մ... աւելի լաւ կանէք մտաբերէք թէ դուք ինչպէս էք վարձատրել իմ անսահման սէրս և վստահութիւնս դէպի ձեզ, պատասխանեց Հեղինէն սաստիկ յուզուելով... Սիրտս դայրոյթից ուզում է տրաքուել, ամօթից կրակ եմ կտրում, հէնց որ յիշում եմ... որ ես այնպիսի մարդու կին եմ և պէտք է մնամ... Յիշո՞ւմ էք ձեր խօսակցութիւնը կոմսի հետ... Այնպիսի մարդուց... կարելի է ամեն բան սպասել. նա ընդունակ է ամեն տեսակ յանցանք գործելու...

Արտասուքը խեղդեց Հեղինէին. նա չը կարողացաւ խօսքը շարունակել։

Ամիրանովը լսում էր կնոջ խօսքերը սաստիկ զայրացած։ Եթէ նա անկեղծ խօսէր, պէտք է հայհոյէր կնոջը, բայց մոռածելով որ այդ ձեռնտու չի իրան, զսպեց զայրոյթը ու հանդարտ կերպով պատասխանեց.

—Սատաներիդ մէջ ոչ մի միտք չը կայ. այդ բոլորը քո բորբոքուած երևակայութեան զառացմունքն է։ Խելքդ գլուխդ հաւաքիր, սիրելիս, ու առաջուայ պէս բարի և քաղցր կին եղիր ինձ համար։ Իսկ ես այն աստիճանի սիրում եմ քեզ ու մեր քաղցր երեխային, որ ձեր խաթեր կ'աշխատեմ լինել այնպիսի մարդ, ինչպէս քո ցանկութիւնդ է որ ես լինեմ։ Ես քեզ թէ այժմ և թէ միշտ անչափ սիրում և սիրել եմ. իսկ սէրը, հոգիս, հրաշքներ է գործում։

—Սիրո՞ւմ ես։ Եատ շնորհակալ եմ այդ տեսակ սէրից։

Հեղինէի ձայնը սաստիկ դառնութիւն ու զայրոյթ էր արտայայտում։

—Զգացմունքները չի կարելի այդ տեսակ սառն դատողութեամբ ստուգել, արուեստական ոգևորութեամբ արտասանեց Ամիրանովը։

Այդ րոպէին ծառան ներս մտաւ և յայտնեց, որ ինչ-որ մի աստիճանաւոր ցանկանում է նրան տեսնել մի շատ կարևոր գործի համար։ Ամիրանովը գնաց։

Հեղինէն գլուխը քաշ քցած ընկաւ տխուր մոռածմունքների մէջ։

Նա ինքն իրան մեղադրում էր, որ շատ խիստ կերպով վարուեց մարդու հետ, և հետևեալ առաւօտը աւելի մեղմ կերպով սկսեց խօսել նրա հետ նոյն հարցի մասին, բայց Ամիրանովը աշխատում էր քաղցրութեամբ համոզել կնոջը, որ թողնի այդ մոռդրութիւնը։ Նա չը գիտէր որ իւր քաղցր խօսքերն ու փաղաքշանքները ընդհակառակն են ներգործում կնոջ վրայ։

—Լաւ, ասենք թէ ես չեմ համապատասխանում ազնուութեան մասին քո ունեցած իդէալական գաղափարին. բայց ասա խնդրեմ, ինչով է մեղաւոր խեղճ երեխան, որ դու այնպէս անսիրտ կերպով վճռում ես բաժանել նրանից, ասաց նա կնոջը երբ որ նա վերջապէս վճռական կերպով առաջարկեց որ բաժանուեն իրարից։

—Բաժանուե՛լ երեխայից։ Միթէ կարող էի ես այդպիսի սար-

սափելի բան մինչև անգամ մոքովս անց կացնել։ Ես պէտք է ձեզ խնդրեմ որ, իբրև ողորմութիւն, թոյլ տայիք պահել ինձ մօտ երեխայիս, արտասանեց նա արտասուքը հազիւ պահելով։ Ի հարկէ անմտութիւն կը լինէր իմ կողմից կարծել որ դուք ընդ միշտ կը հրաժարուէք ձեր որդու վրայ ունեցած իրաւունքներից, բայց թողէք մինչև մեծանալը ինձ մօտ մնայ, ինձ հետ անց կացնի իւր մանկութեան տարիները, յետոյ վերցրէք ինչ ուզում էք արէք։ Իսկ մինչև այդ ժամանակ, երդւում եմ նրա քաղցր արևով, որ ես ամեն հնարք գործ կը դնեմ և թոյլ չեմ տալ որ նա ձեր մասին վատ կարծիք կազմի։

—Հեղինէ, ես այդպիսի անմիտ և անսիրտ պահանջի չեմ կարող համաձայնել։ Ճիշտն ասա, հօ ուրիշի վրայ չե՞ս սիրահարուել։

Ամիրանովի կասկածները կանգ առան Սահատունու վրայ։

—Դուք շատ լաւ գիտէք, որ ես ոչ ոքի չեմ սիրում այն տեսակ ինչպէս դուք էք հասկանում սիրելը. իմ խիղճը ձեր տուաջ բոլորովին մաքուր է։

Դարձեալ խնդրում աղաչում եմ ձեզ, կատարեցէք իմ խնդիրքը, բացականչեց Հեղինէն սաստիկ յուզած ձայնով։

Նրա երեսը յուզմունքից կարմրել, կրակ էր կտրել։

—Աղաչանքդ զուր է. ես երբէք չեմ համաձայնիլ բաժանուել որդուցս։

Ամիրանովը այնպիսի վճռական կերպով արտասանեց այդ խօսքերը, որ Հեղինէն յոյսը կտրեց երբ և իցէ նրան համոզելու՝ կատարել իւր խնդիրքը։

Ճար չը կայ, պէտք է հաշուեմ սև բախտիս հետ. հօ չեմ կարող երեխայիս թողնել ու հեռանալ, մտածեց նա ու սկսեց կամաց-կամաց պատրաստութիւն տեսնել ճանապարհ ընկնելու դէպի Պետրիգօրսկ։

Ամիրանովը ուրախանում էր տեսնելով այդ պատրաստութիւնները։ Նա յոյս ունէր, որ ճանապարհորդութիւնը կը բժշկէ կնոջ տխրութիւնը։

Ի՛ արժէ մեծ նշանակութիւն տալ նրա խօսքերին, մխիթարում էր նա ինքն իրան, այդ մի քամի է որ կը գայ ու կ՚անցնի, երկար տևել չի կարող. մայրական զգացմունքներն ու պարտականութիւնները անկասկած նրան կը հաշտեցնեն ինձ հետ։

Այդպէս էր մոռանում Ամիրանովը և աշխատում էր որքան կարելի է քաղցր վարել կնոջ հետ։

Թ-ից դուրս գալու նախընթաց օրը Հեղինէն գնաց մեռաս բարև անելու Աննա Դուրգէնեանի և ուրիշ մօտ ծանօթների հետ։ Այցելութիւնները վերջացնելով նա տուն վերադարձաւ. ներս որ մտաւ՝ Ամիրանովն ու մեծ քոյրը շատ խորհրդաւոր կերպով իրար հետ խօսում էին. նա մէկ-երկու բոպէ նստեց նրանց մօտ. բայց նկատելով որ խանգարում է նրանց խօսակցութիւնը, իսկոյն տանից դուրս եկաւ որ նրանք մենակ մնան։ Նրա գնալուց յետոյ Ամիրանովը աղատ շունչ քաշեց ու նորից սկսեց խօսակցութիւնը։

—Այդպէս, Եփեմիա, Ուբարովի ապօրինի աղջիկը պէտք է ստանայ նրա ահագին կարողութիւնը։

—Բայց դու չէիր ասում, Միքայէլ, որ կտակը առանց նօտարի ու վկաների ստորագրութեան օրէնքի առաջ նշանակութիւն չունի։

—Ճիշտ է։ Բայց կարո՞ղ ես երաշխաւորել, որ վաղը կամ միւս օր կտակին օրինաւոր ձև չեն տալ։

—Քանի որ նա շարժւել չի կարողանում ու լեզուն բռնւած է՝ այդ չի լինիլ... Մի վախենար, ինչ որ էլ լինի, կտակը մեր ձեռքից չի ազատուիլ։

—Հանաք մասխարութիւն չէ, հարիւր յիսուն հազար մանէթը փողոցումը չենք կարող դանել, ինչ էլ լինի պէտք է ձեռներիցս բաց չը թողնենք։ Ինձնից մօտ ազգական չունի նա։ Այդ նպատակին հասնելու համար երկու միջոց կայ, ասում էր ինքն իրան Ամիրանովը դանդաղ քայլելով սենեակում։

Լսիր, Եփեմիա, յանկարծ կանգ առաւ նա սենեակի մէջ տեղում, դու ամէն միջոց պէտք է գործ դնես որ չը կարողանան...

Նա խօսքը կիսատ թողեց, մօտեցաւ դռանը, բաց արեց, նայեց տեսնի հօ ոչ ոք չկայ միւս սենեակում, յետոյ նորից փակեց դուռը ու խորհրդաւոր կերպով շարունակեց, որ չը կարողանան օրինաւոր ձև տալ կտակին։ Իսկ եթէ այդ չը յաջողեց, այն ժամանակ պէտք է...

—Գիտեմ, գիտեմ, խօսքը կտրեց քոյրը։ Եթէ սրանից յետոյ էլ նա հիմիկուայ պէս ողորմելի դրութեան մէջ կը լինի, ես ու Թամարը շատ բան կարող ենք անել, չարախնդաց ժպիտով աւելցրեց նա։

Քոյր ու եղբօր աչքերը փայլեցին յոյսի լուսով։

Ամիրանովը նստեց քրոջ կողքին։ Երկար ժամանակ նրանք դեռ քչփչում էին։

—Տես, զգոյշ եղիր, ասաց եղբայրը մեռաս բարև անելիս։

Ցոյս ունեմ որ իմ բացակայութիւնը չի վնասիլ գործին։

—Չէ, չէ, ընդհակառակը։ Իսկ եթէ բան է հարկաւորութիւն լինի, ես իսկոյն հեռագիր կը տամ։

IX

Ամիրանովները ճանապարհ ընկան դէպի Պետերբուրգ։ Հեղինէն, որ մինչև այդ ժամանակ բացի Թ-սի մօտակայ ամարանոցներից ոչ մի տեղ չէր եղել, երեխայական յափշտակութեամբ էր վերաբերւում ճանապարհորդական նոր ապաւորութիւններին։ Նրան գրաւում էին ճանապարհի երկու կողմով ձգւող անվերջ լեռնաշղթաները, սարերից հոսող հարիւրաւոր առուակներն ու աղբիւրները, կանաչ մարգագետինները, բնութեան բազմատեսակ գեղեցիկ տեսարանները։

Ամիրանովը կնոջովն էր զբաղւած. նա տաք փաթաթում էր նրան, որ չը մրսի, ուրախանում էր տեսնելով նորա հրճւանքը և յաճախ կրկնում էր՝ այ սպասիր, սրանից յետոյ ճանապարհը աւելի հետաքրքրական կը լինի։

Եւ իսկապէս՝ քանի մօտենում էին Մլեթի դարիդուսին՝ բնութիւնը կենդանափոխւում էր. գողտրիկ տեսարաններին, սիրուն գիւղերին ու ճոխ մարգագետիններին հետզհետէ յաջորդում էին թէև աւելի մռայլ, բայց և աւելի վեհ տեսարաններ։ Զարմանքով և մի տեսակ երկիւղածութեամբ էր դիտում Հեղինէն դագաթներով երկինքը շոշափող լեռները, ճանապարհի վրայ կախ ընկած հսկայական ժայռերը, անդնդախոր ձորերը. յափշտակութեամբ ականջ էր դնում արևի առաջ հազար ու մէկ գոյներով ճաճանչին տւող բիւրեղի պէս յստակ ջրվէժների ու փրփրադէզ գետերի գոռում-դղրդումին։ Որքան աւելի էին բարձրանում նրանք, այնքան աւելի վայրի կերպարանք էր ընդունում բնութիւնը, և եթէ Օսետիններին ու Կիստիններին գիւղերը չը լինէին, որոնք բարձրավանդակների վրայից նայում են ճա-

նապարհին, կենդանութեան ոչ մի նշոյլ չէր երևալ այդ խուլ անգունդներում ու ապառամոռ սարերում։

Բնութիւնը խորը տպաւորութիւն էր գործում Հեղինէի վրայ։ Նորա հոգուն պատել էր այն անգիտակցական զգացմունքը, որ ներշնչում է մարդուս ամեն մի վեհ երևոյթ։ Զմայլւած նայում էր նա չորս կողմը, ուր ամեն ինչ կրում էր վեհութեան կնիք, ուր ամեն ինչ կարծես ուզում էր ապացուցանել մարդուս ոչնչութիւնը բնութեան ոյժերի առաջ։

Ամբողջ ճանապարհին Հեղինէն լուռ էր, թէև սաստիկ պահանջ էր զգում խօսելու։ Նորա սիրտը կսկծում էր, որ մօտը չը կայ այնպիսի մի մարդ, որին կարողանար նա հաղորդել իւր տպաւորութիւնները։ Մարդու ներկայութիւնը նորա համար անտանելի ծանրութիւն էր։

—Եթէ ամենաաննշան չափով յոյս ունենայի որ կարող եմ ապահարզան ստանալ որդուս մօտս պահելու իրաւունքով, ես ոչ մի բոպէ չէի տատանուիլ ու կը բաժանուէի մարդուցս, կազատուէի այս անտանելի թշուառական շղթաներից, մտածում էր նա գորովանքով նայելով փոքրիկ երեխային։

Ամիրանովը ուրիշ մտածմունքներով էր զբաղուած. նորա գլխից դուրս չէր գալիս Ուբարովի ժառանգութիւնը։

Ահա վերջապէս նրանք հասան Վլադիկաւկազ։ Վլադիկաւկազում նրանք իջան Ամիրանովի հօր մօրաքրոջ մօտ, որ՝ ուրիշ աւելի մօտ ազգականներ չունենալով շատ էր սիրում Միքայէլին ու քոյրերին և շուտ-շուտ նամակ էր գրում, կանչում իւր մօտ։

Ճանապարհից մի քիչ հանգստանալուց յետոյ, Հեղինէն տանից դուրս եկաւ քաղաքը տեսնելու։ Մարդը հետևեց նրան։ Բայց զարմանալի է՝ ոչինչ չէր հետաքրքրում Հեղինէին. նա չէր պատասխանում մարդու հարցերին ու նկատողութիւններին և շարունակ նայում էր չորս կողմը, կարծես մէկին փնտռելիս լինէր։ Ցանկարծ նորա հայեացքը կանգ առաւ Սահառունու վրայ։ Նա ճանաչեց Սահառունուն նորա քայլւածքից ու արագացրեց իւր քայլերը։

—Մի քիչ կամաց, սիրելիս, չեմ կարողանում յետևիցդ հասնել, տհաճութեամբ ասաց Ամիրանովը, առանց նկատելու Սահառունուն։

Ամիրանովը յոնքերը կիտեց և ինչ որ փնթփնթացրեց քթի տակին։

Իսկ Սահառունին հեռուից տեսնելով Ամիրանովներին՝ ճանապարհը ծռեց ու մտաւ մի խուլ փողոց։

Հետևեալ օրը պատահելիս նա նոյնը արեց։

Հեղինէն մնացել էր շւարած և վճռեց անպատճառ տեսնել նորա հետ ու խօսել երես առ երես։ Ցարմար բոպէ գտնելով նա մենակ դուրս եկաւ փողոցը։ Մի ժամի չափ զուր թափառելուց յետոյ նա վերջապէս պատահմամբ գտաւ Սահառունու բնակարանը։ Սահառունին կանգնած էր բաց պատուհանի առաջ սաստիկ մտահոգ դէմքով։

— Գէորգի Ալեքսանդրովիչ, ձայն տուեց նա։ Սահառունին ցնցուեց և ամօթից կարմրած դուրս եկաւ փողոց։

—Չէ՞ք զալ մի քիչ զբօսնենք այդում, մասամբ քնքշութեամբ, մասամբ յանդիմանօրէն ասաց Հեղինէն ձեռք տալով նրան։

Մի քանի քայլ նրանք արեցին առանց խօսելու։

—Չը նստե՞նք այս ծառի մօտ, այստեղ քամին այնքան չի նեղացնիլ մեզ, առաջարկեց Սահառունին։

Հեղինէն, որ սաստիկ յոգնել էր մեն գալուց, ուրախութեամբ համաձայնեց նստել։

—Դուք երևի գնում էք ջրերը ձեր առողջութիւնը կազդուրելու համար, հարցրեց Սահառունին տխուր դիտելով նրա դունաթափ ու մաշուած դէմքը։

Հեղինէն զլխով արեց։

—Ինչ է պատահել ձեզ, Գէորգի Ալեքսանդրովիչ, ինչու էք դուք այդպէս աշխարհից փախչում ինձանից, կամ դուցէ դուք ուզում էք բոլորովին մոռանալ մեզ, դառնութեամբ ասաց նա։

—Տիկնի՛ն Հեղինէ, ի՞նչ էք ասում. մոռանա՞լ ձեզ. միթէ ես կարող եմ մոռանալ ձեզ։

Ինչպէս էք սիրում ինձ այդպիսի բան ասել, ասաց նա տաքացած, բայց տխուր ձայնով և ուղիղ նայեց նրա աչքերին։

Սահառունին չը կարողացաւ դիմանալ նրա յանդիմանութեամբ լի հայեացքին և ակամայ ասաց.

—Ես կ՚ուզէի, որ դուք անարդար չը լինէիք դէպի ինձ։

Հեղինէն ուշադրութեամբ նայեց Սահառունու երեսին և նրա մտքումը ինչ-որ մի կասկած ծագեց. բայց նա իսկոյն դէն գցեց այդ կասկածը ու, վեր թռչելով տեղից, առաջարկեց Սահառունուն առաջ գնալ զբօսնելով։ Սահառունին շփոթած վեր կացաւ ու գնաց նրա հետ։

Երբ որ մօտեցաւ տանը՝ Հեղինէն խնդրեց որ ներս մտնի մի բաժակ թէյ խմելու։

—Թէև մենք մեր տանը չենք, հիւր ենք, բայց մեր տանտիկինը շատ հիւրասէր է, ուրախութեամբ կ՝ընդունի ձեզ։

Սահառունին ներողութիւն խնդրեց ասելով որ չի կարող կատարել նրա խնդիրքը։

—Ես կարծում էի թէ ինձ մի քիչ աւելի էք յարգում. մենք վաղը առաւօտ գիշերով ճանապարհ ենք ընկնելու. դուք չէ՞ք ուզում ինձ հետ անց կացնել վերջին երեկոն։

—Տիկին Հեղինէ, աղաչում եմ, այդքան խիստ մի եղէք դէպի ինձ։ Աշխատեցէք մի կերպ արդարացնել իմ կարծեցեալ անուշադրութիւնը դէպի ձեզ... գուցէ մի ժամանակ դուք կ՝իմանաք աւելի քան այժմ կարող էք հասկանալ իմ խօսքերից... բայց այժմ, ի սէր Աստուծոյ, ինձնից մի պահանջէք այն, որ ինձ համար անհնար է։ Ինձ համար չափազանց ծանր են ձեր յանդիմանութիւնները, նրանք ինձ... աւելի կ՝անբախտացնեն։

Հեղինէի երեսը կրակի նման վառուեց և աչքերը փայլատակեցին։ Երևում էր, որ նա սկսեց հասկանալ Սահառունու բերնից ակամայ դուրս թռչող կցկտուր խօսքերի խորհրդաւոր իմաստը։ Այդ աւելի սաստկացրեց նրա սէրը դէպի Սահառունին։

—Իսկ ինչքան վերստ է մնում մեզ մինչև Պետերբուրգ, մեքենայաբար հարցրեց Հեղինէն ցանկանալով ընդհատել լռութիւնը։

—Երկու հարիւր յիսուն կամ երեք հարիւր։

—Ուրեմն համարեա նոյնքան որքան Թ-սից այստեղ, ասաց Հեղինէն աշխատելով չը նայել Սահառունու երեսին։

Սահառունին նոյնպէս խուսափում էր նրա հայեացքից։

—Մնաք բարև, տիկին Հեղինէ, յուզած արտասանեց նա, ես շուտով արտասահման կ՝երթամ և դուցէ երկար ժամանակ չը տեսնուենք իրար հետ։

Սահառունու ձայնը դողաց, բայց նա շուտով զսպեց իրան և աւելի հանգիստ ձայնով շարունակեց.

—Խօսք տէք, որ գոնէ երբեմն—երբեմն տեղեկութիւն կը հաղորդէք ինձ ձեր առողջութեան մասին։ Ցայ Աստուած, որ ջրերում բոլորովին առողջանաք։

Թէև Հեղինէն գիտէր որ Սահառունին գնալու է արտասահման, բայց այնուամենայնիւ նրա խօսքերը ճնշող տպաւորութիւն գործեցին նրա վրայ և նա տխուր-տխուր ասաց.

—Գնո՞ւմ էք... այդպէս շուտ... բայց չէ՛, լաւ էք անում, գնացէք, ես հաւատացած եմ, որ այսուհետև ձեր բաները աւելի յաջող կերթան քան մինչև այժմ։

Հեղինէն այդ խօսքերը այնպէս զգացուած արտասանեց, որ Սահառունին հազիւ կարողացաւ իրան զսպել ու սիրտը բաց չանել նորա առաջ։

Ցոյս ունեմ, որ կը գաք մեզ հետ միասս բարև անելու, փոքր ինչ լռութիւնից յետոյ շարունակեց Հեղինէն. մանաւանդ որ ձեր քրոջ գործերով ձեզ կարծեմ պէտք կը լինի գնալ Պետերբուրգ՝ ինչպէս ինձ ասաց Աստուին։

Սահառունին շփոթուեց. նա ուզում էր ծածկել Հեղինէից, որ ինքը գնալու է Պետերբուրգ. բայց դուրս եկաւ որ նրան արդէն յայտնի էր այդ։ Շփոթութիւնից նա չէր իմանում ինչ պատասխանի։ Հեղինէն ընդհատեց լռութիւնը.

—Ուրեմն, Գէորգի Ալեքսանդրովիչ, ես ձեզ հետ միասս բարև չեմ անում, ցտեսութիւն, չէ՞։

Սահառունին պինդ սեղմեց նրա ձեռքը և, վերջին անգամը աղերսող հայեացք քցելով նրա վրայ, տենդային արագութեամբ ցած իջաւ սանդուղքներովը ու գնաց տուն։

Երկար ժամանակ ման էր գալիս նա իւր սենեակներում, վերջապէս ժամի տասնմէկին նորից դուրս եկաւ փողոցը։ Ոտները մեքենայաբար տանում էին նրան այնտեղ ուր ձգտում էր նա իւր հոգու բոլոր ոյժերով։ Բաւական ժամանակ մտայոյզ կանգնած էր նա Հեղինէի պատուհանների առաջ։ Վերջապէս երբ որ տեսաւ նա Հեղինէի ստուերը սպիտակ նուրբ վարագոյրի վրայ, երևակայութեամբ վերջին միասս բարևը ուղարկեց նրան ու մտածեց.

—Խեղճ անմեղ երեխայ, նա չի իմանում թէ ինչ կարող է ծագել դրանից. նա չը գիտէ, թէ ինչ հրդեհող կրակ կայ այդ զգացմունքի մէջ, և ի՞նչ, յանկարծ ես, ե՛ս լինեմ նրա անբախտութեան պատճառը...

Այդ միտքը էլեքտրական հոսանքի նման ցնցեց Սահառունուն և նա թուլացած ընկաւ նստարանի վրայ։

Շատ ուշ էր, երբ որ վերջապէս գիշերային սաստիկ խոնաւութիւնը մինչև ոսկրները թափանցելով ստիպեց նրան վեր կենալ ու գնալ տուն։

(Կը շարունակուի)